| III.—Մարգագետնի, արոտների մշակումը և անասնաբուծությունը. Նրանց նշանակությունը ԱՍՖԽՀ-ի գյուղատնտեսության համար։ Հարցեր. 1) Անասուններ աճեցնելու համար ի՞նչ պայմաններ են հարկավոր։ 2) Պարապո՞ւմ են արդյոք ձեր վայրերում անասնաբուծությամբ և ի՞նչ բնական նպաստավոր պայմաններ կան։ 3) Ինչ նշանակություն ունեն արոտամշակությունը և անասնաբուծությունը գյուղատնտեսության համար ընդհանրա- | Տեխնիքական բույսերի մշակույթը։ Այգեգործություն և բանջարաբուծություն։ Տեխ. բույսերի գլխավոր տեսակները և նրանց մշակության ռայոնները. (բամբակ, ծխախոտ, թեյ, վուշ, կանեփ, թթենի, խաղող և մրգատու ծառեր). Հացացանքսի կրճատումը և փոխարինումը տեխ. բույսերի։ Խաղողի, մրգատու ծառերի, բանջարաբույսերի և խոտացանքսի մշակությունը։ Հողագործության այս ճյուղերի նպաստավոր պայմաններն Անդրկովկասում (հող և կլիմա)։ | Խորհրդային իշխանության ձեռնարկած միջոցներն անասնաբուծության և մարգաբուծության բարձրացման համար, վորոնք պետք է նպաստեն գյուղատնտեսության զարգացմանը։ Դասակարգերը գյուղում, Անասունների և ինվենտարի բաշխումը և չքավոր գյուղացիության կազմակերպումը։ Փոխօգնության կոմիտեներ։ Հողանտառ միությունը և նրա դերը գյուղում։ | Ինչ է ստանում բույսը հողից։ Հողի պարարտացումը գոմաղբով։ Հանքային պարարտացում։ Անասունների տեսակի ազնվացումը և նրանց խնամքը։ | Գործողություն ցույց տվող բառեր (ի՞նչ ես անում-հարցով) եմ, ես, է, ենք, եք, են։ Անկետա լցնելու վարժություն։ Հայտարարություններ գրել հողբաժնին և գյուղխորհրդին։ | Գործողություններ տարրական կոտորակներով։ Հաշիվներ անասունների կերի միավորների և նրանց պահեստի կերի քանակի։ | 1. «Աշխանաք» II տարի. 2. «Հայաստանի Աշխատավորուհի». —— Ամփոփում և յեզրակացություններ. 1) Ցույց տվեք քարտեզի վրա, անասնաբուծական և արոտամշակության ռայոնները. 2) Ի՞նչ նշանակություն ունի խոտացանքսը և անասնաբուծությունը գյուղատնտեսության և յերկրագործության համար։ 3) Ի՞նչ միջոցների |

| Թեմաներ | Տնտեսական-աշխարհագրություն | Քաղաքագիտություն | Բնագիտություն | Հայոց լեզու | Մաթեմատիկա | Աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| պես և մասնավորապես յերկրագործության համար: 4) Անասնաբուծությունը ինչ է տալիս քաղաքի բնակչությանը. | | | | | | յե ձեռնարկում Խ. Իշխ. անասնաբուծության բարձրացման համար 4) Ինչպիսի՞ խմբավորումների յե բաժանվում գյուղացիությունը ըստ անասունների քանակի և ըստ ինվենտարի և ինչպես է վերաբերվում Խ. Իշխ. յուրաքանչյուր խմբավորման: (Հարկեր): 5) Ի՞նչ են անում գյուղփոխողմները չքավոր գյուղացիների համար: |
| IV.— Գյուղատնտեսության մյուս ճյուղերը: Բանջարաբուծություն, այգեգործություն և արհեստական կուլտուրայի մշակումը: Սրանց նշանակությունը գյուղացիական տնտեսության համար: Հարցեր. 1) Ի՞նչ գյուղատնտեսական արտադրանք է հարկավոր քաղաքի արդյունաբերության համար: 2) Ի՞նչ վայրեր գիտեք, վորտեղ ցանում են վուշ կանեփ, բամբակ, շաքա- | Անասնապահություն: Նրա նշանակությունը գյուղատնտեսության համար: Նրա կախումը արոտներից և խոտացանքերից: Անդրկովկասի անասնաբուծության ճյուղերը և գլխավոր տեսակի անասուններն և անասնաբուծության գլխ. ռայոնները. Սրա զարգացման արհեստական պայմանները, ազնվացում, կեր, խնամք, բնակարան և անասնաբուծական պայմանների բարելավում: Անասնաբուծական | Խորհրդային իշխանության ձեռնարկած միջոցները այգեգործության, բանջարաբուծության և կուլտուր բույսերի զարգացման գործում: Ցուցադաշտեր: Սերմերի ընտրությունը, տեսակների բաժանելը և նրանց ապառիկ բաշխումը զանազան արտելներին: | Սերմացանի ընտրություն: Սրա ծլանակությունը: Պտղատու ծառերի խնամքը: Տեսակների ազնվացումը: | Դիմումի մեջ ստորակետի գործածությունը: Պաշտոնական և գործնական թղթեր կազմելու վարժություններ: Դիմումներ արտելին, կոմունային, հողվարչություններին: | Բանջարաբուծության և այգեգործության արտադրանքների հետ կապված հաշիվներ: Այս կամ այն կուլտուր բույսի մշակման արդյունքը վորոշել ու հաշվի առնել: | Ոգտվել (յեթե հնարավոր է ձեռք բերել) գյուղատնտեսական բրոշյուրներից ու գրքերից: «Աշխատանք IIտարի», «Մաճկալ» և «Աշխատավորուհի». — Ամփոփում և յեզրակացություններ: 1) Գտեք քարտեզի վրա այգեգործական, բանջարաբուծական և կուլտուր բույսերի մշակման ռայոնները: |

| Թեմաներ | Տնտեսական աշխարհագրություն | Քաղքրագիտություն | Բնագիտություն | Հայոց լեզու | Մաթեմատիկա | Աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| բաճակնդեղ (բազուկ).<br>3) Ինչպիսի պայմաններ են հարկավոր կուլտուր բույսերի մշակության համար: | և կաթնատնտեսական արտելների կազմակերպում: | | | | | 2) Նկարագրեցեք այդ ռայոնները և մատնանշեք դրանց մշակության պատճառները:<br>3) Ի՞նչ օգնություն է ցույց տալիս Խ. Իշ. այն արտելներին, կոմմունաներին, վորոնք զբաղվում են կուլտուրական բույսերի մշակմամբ: |
| V.— Անտառաբուծություն, անտառաարդյունաբերություն. վորսորդություն, ձկնորսություն և նրանց նշանակությունը յերկրի տնտեսության համար:<br>Հարցեր.<br>1) Ի՞նչ է տալիս անտառը գյուղատնտեսության համար.<br>2) Ի՞նչ արդյունագործությամբ է զբաղվում գյուղացիությունը ձմեռը:<br>3) Ուրիշ ի՞նչ ոժանդակ արդյունագործություն գիտեք գյուղատնտեսության համար.<br>4) Անտառային արդյունաբերության և ձկնորսության ի՞նչ ռայոններ գիտեք: | Անտառային տնտեսություն և արդյունաբերություն: Անդրկովկասի անտառային շրջանները. ծառերի գլխավոր տեսակները: Անտառի օգտագործման զանազան ձևերը: Վորսի գազաններ: Ձկնորսություն. ձկնարդյունաբերության գլխավոր և շահագործվող ռայոնները Ադրբեջանում և Հայաստանում նրանց տնտեսական նշանակությունը Անդրկովկասի համար: | Տնայնագործական արդյունաբերություն կոոպերացիան: Փայտյա իրեր արտադրողների միություն: Խորհրդային իշխանության ձեռնարկած միջոցները անտառային տնտեսության զարգացման գործում: | Բույսերի նշանակությունը օդը մաքրելու գործում: Անտառների կարատելը և գետերի ծանծաղացումը (նվազումը) թավուտը տաքության վատ հաղորդիչ: Մեծ վորսերի փուլերը (ձկնկիր դնելը): | Նախորոք մշակված պլանով նկարագրել անտառային ռայոնները և ձկնորսության տեղերը: | Վիճակագրական տվյալներով կազմել (ինքնուրույն) դիագրամներ վորոշել անտառային և ձկնորսային արտադրանքի պահանջի քանակը: | «Աշխատանք» II տարի, Մեթոդական ժողովածու (մաթեմաթ. մաս.)<br>«Հայաստանի աշխատավորուհի»<br>—<br>Փմփոփում և յեզրակացում<br>1) Գտեք ԱՍՖԽՀ քարտեզի վրա տնայնագործության և փայտեղեն իրեր արտադրող ռայոնները:<br>2) Վո՞րտեղ են պարապում անտառահատությամբ և արտահանությամբ.<br>3) Ի՞նչ նշանակություն ունի շինարարական փայտը առևտրի համար ուրիշ յերկրների հետ. |

| Թեմաներ | Տնտեսական-աշխարհագրություն | Քաղգրագիտություն | Բնագիտություն | Հայոց լեզու | Մաթեմատիկա | Աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 4) Ի՞նչ նշանակություն ունի վորսորդությունը յերկրի տնտեսության և առևտրի համար: Արդյունաբերական կոոպերացիայի նշանակությունը այս ճյուղերի համար: |
| VI.—Անդրկովկասի գյուղատնտեսական արդյունաբերությունը: (Շաքար, բուսական յուղ, ծխախոտ, գինեգործություն): Հարցեր: Վո՞րտեղից ե ստացվում արդյունաբերության այս ճյուղերի համար հում նյութ: Ի՞նչ տեղեր գիտեք, վորտեղ վերոհիշյալ նյութերը մշակվում են: | Գյուղատնտեսական արդյունաբերություն (գինու, ծխախոտի և կաշվի) կաթնատնտեսություն և այլն: Անդրկովկասի գյուղատնտեսական արդյունաբերության արդի վիճակը. Նրա ճյուղերը տվյալ տեղում, նրա զարգացման ռայոնները: | Արհմիությունները գյուղատնտեսական արդյունաբերության մեջ (շաքարագործների, թուղթ արտադրողների միություն) գյուղատնտեսական կոոպերացիա. Խորհ. իշխանության ձեռնարկած միջոցները գյուղատնտեսական արդյունաբերության զարգացման գործում: | Ի՞նչպես ե ստացվում շաքարը: Ծխախոտի, ողու, ճակնդեղի, յուղատու սերմերի կազմը և նրանց նշանակությունը մարդու որգանիզմի համար: | Նիստերի արձանագրություններ կազմելու վարժություններ: | Տասնորդական կոտորակների բազմապատկումն ու բաժանումը միանշան թվերի վրա: Հաշիվներ կոոպերատիվի անդամագրքույկի տըվյալների վրա: (Կոպեկների թըվագրությունը վորպես ռուբլու հարյուրերորդ մասը:) — | «Մաճկալ.» «Աշխատանք» II տ., Վիճակագրական տեղեկատու: — Ամփոփում և յեզրակացություններ. 1) Վո՞րոնք են Անդրկովկասի գլխավոր գյուղատնտեսական ռայոնները. 2) Արդյունաբերությունը բարձրացնելու միջոցներ են կոոպերացիան, արտելների կազմակերպումը, մեքենաների կատարելագործումը: |
| VII.—ԱՍՖԽՀ-ի գյուղատնտեսության դրությունը: Խ. իշխանության գյուղատնտեսական քաղաքականությունը և քաղաքի ու գյուղի զոդումը: | Գյուղատնտեսության վիճակը Անդրկովկասում և նրա համեմատությունը այլ յերկրների գյուղատնտեսության հետ: Նրա բարելավման մեթոդները: Բազմադաշտա- | Խորհրդային իշխանության գյուղատնտեսական քաղաքականությունը: և նրա նշանակությունը գյուղացիության համար: Զոդման քաղաքական և տնտեսական | Տեխնիկայի նշանակությունը բնության դեմ մըղվող կռվում: Արհեստական վոռոգում. քիմական գազեր և պայքար | Ստեղծագործական գրավոր աշխատանքներ և կոնսպեկտ կազմելու վարժություններ: Միջակետի գործածության կանոնները: | Ծանոթություն նախահաշիվների հետ (ըստ պետբյուջեյի): Գյուղացիական տնտեսության բյուջեն: | «Աշխատանք» I և II տ. Ոգտվել բնագիտական հանրամատչելի գրքերից. «Մաճկալ.» — Ամփոփում և յեզ- |

| Թեմաներ | Տնտեսական-աշխարհագրություն | Քաղգրագիտություն | Բնագիտություն | Հայոց լեզու | Մաթեմատիկա | Աղբյուրներ |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| Հարցեր։ 1) Ի՞նչու յենք մեր յերկիրը անվանում գյուղատնտեսական։ 2) Ձեր վայրի համար ինչ նշանակություն ունեն գյուղատնտեսության բոլոր ճյուղերը։ 3) Տեղական մարմինները ի՞նչ միջոցներ են ձեռնարկում գյուղատնտեսության բարձրացման և զարգացման համար։ 4) Ի՞նչ կապ կա ձեր և ձեր շեֆի միջև, կամ դուք, վորպես շեֆ ի՞նչ եք արել գյուղի համար։ | յին ցանքսափոխություն։ Գյուղական աշխատանքի մեքենայացման, կոոպերացման, արհեստական պարարտացման էլեկտրոֆիկացիայի կիրառման անհրաժեշտությունը։ Հողշինարարական (մելիորացիա) աշխատանքները ցանքսերի տարածությունը ավելացնելու նկատամամբ։ Պայքար յերաշտի և վնասատուների դեմ։ | նշանակությունը։ Կոոպերացիան գյուղատնտեսության մեջ։ Գյուղատնտեսական կոմունաների, ընկերությունների և արտելների նշանակությունը։ Անհատական հողագործությունը կոլեկտիվ հողագործության վերափոխվելու անհրաժեշտությունը սոցիալիստական հողագործության հասնելու համար։ Լենինը և գյուղատնտեսությունը։ | վնասատուների դեմ։ | | Կազմել զանազան հաշիվներ և նախահաշիվներ գյուղատնտեսության համար։ | րակացություններ. 1) Գյուղատնտեսության արդի վիճակը։ Ի՞նչ ճանապարհներ կան նրա զարգացման համար։ 2) Լենինի ուսմունքը նոր տնտեսական քաղաքականության գյուղի և քաղաքի զոդման, յերկրագործության և էլեկտրոֆիկացիայի սոցիալիստական ձևերի մասին։ 3) Ի՞նչ նշանակություն ունի ԱՍՖԽՀ գյուղատնտեսությունը միջազգային շուկայի համար։ |

# ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

## ԽՍՀՄ ՅԵՎ ՄՅՈՒՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Թեմաներ | Տնտեսական-աշխարհագրություն | Քաղգրագիտություն | Բնագիտություն | Հայոց լեզու | Մաթեմատիկա | Աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| I.—Ընդհանուր տեսություն—<br>—<br>1) Աշխարհագրական դիրքը, սահմանները, տարածությունն ու բնակչությունը։<br>2) Մակերևույթի կազմությունը. գետեր, լճեր, հող, կլիմա, բուսականություն, կենդանիներ։<br>3) Գլխավոր հարթությունները, բարձրավանդակներ, լեռներ։<br>4) Հանքային հարստություն, գյուղատնտեսություն և արդյունաբերություն։<br>Անդրկովկասի և Խ. Միության տնտեսական փոխադարձ կապը։ | Գլխավոր հանքերը և նրանց ռայոնները։ Գյուղատնտեսության գլխավոր ճյուղերը և նրանց ռայոնները։<br>Արդյունաբերության Գըլխավոր ճյուղերը ու նըրանց կենտրոնները։<br>Հաղորդակցության միջոցները (գլխավոր յերկաթուղագծեր, ջրային, օդային ճանապարհներ). գլխավոր նավահանգիստները։ Անդրկովկասի և Խ. Միության փոխադարձ կապը։<br>Անդրկովկասը վորպես հում նյութ մատակարարող Միության գործարաններին։ | ԽՍՀՄ-ի սահմանադրությունը։ Ժողկոմատները. Հաղորդակցության, արտաքին առևտուր (Внешторг—Առտ-առ.)։<br>Տնտեսության գերագույն օրգանները (СТО) աշխատանքի և պաշտպանության խորհուրդ։ (ВСНХ) համամիութենական ժողտնտխորհ. Պետպլան։ | | Կարդացած հոդվածի կոնսպեկտը կազմելու վարժություններ։ | Ամբողջ թվերի չորս գործողությունները (հիմնովին կրկնել)։ | «Մաճկալ», «Հայաստանի աշխատավորուհի». «Աշխատանք II տ.<br>—<br>Ամփոփում և յեզրակացություններ.<br>1) Միության լրիվ և կրճատված անունը.<br>2) Նրա սահմանները և բռնած տեղի համեմատական չափն այլ յերկրների հետ։<br>3) Ո՞ւմ է պատկանում բարձր իշխանությունը։ |
| II.—ԽՍՀՄ կապիտալիստական շրջապատում և նրա տեղը համաշխարհային շուկայում։<br>Հարցեր.<br>1) Ի՞նչ յերկրների մասին եք լսել և ի՞նչ յերկրներում եք յեղել։<br>2) Ի՞նչ յերկրների ժողովուրդների եք հանդիպել մեզ մոտ։ | Յերկրագնդի քարտեզի ընթերցում. ԽՍՀՄ-ի դերը համաշխարհային շուկայում (արդյունաբերության թույլ զարգացում. հում նյութերի հարստություն) գտնել քարտեզի վրա կապիտալիստական յերկրները, գլխավոր նավահանգիստները և հաղորդակցության ճանա- | ԽՍՀՄ-ի քաղաքական կազմության տարբերությունը կապիտալիստականից։<br>ԽՍՀՄ-ն միակ աշխատավորական հանրապետությունն է ամբողջ աշխարհում։ Պատերազմների պատճառները կապիտալիստական յերկրներում։ 1914 թ. համաշ- | Ջուրն ու ցամաքը և նրանց բռնած տեղն ու տարածությունը։ Յերկրի գնդաձև լինելը։ | Կազմել կարդացածի կոնսպեկտը։<br>Միջակետը բացատրությունից առաջ։ | Տասնորդական կոտորակների բոլոր չորս գործողությունները։ | «Աշխատանք» II տ. «Մեթոդական ժողովածու», «Մաճկալ». «Հայաստանի աշխատավորուհի»։<br>—<br>Ամփոփում և յեզրակացություններ.<br>1) Ինչո՞վ է տարբերվում ԽՍՀՄ-ի |

| Թեմաներ | Տնտեսական-աշխարհագրություն | Քաղգրագիտություն | Բնագիտություն | Հայոց լեզու | Մաթեմատիկա | Աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| 3) Ի՞նչ են ներմուծում մեր յերկիրը ուրիշ յերկրներից, և ի՞նչ ենք մենք արտահանում։ | պարհները։ Ռադիո-փոստ-հեռագիր և նրանց նշանակությունը միջազգային առևտրի համար։ | խարհային պատերազմի պատճառները։ ԽՍՀՄ-ի բլոկադան։ Կարմիր բանակի և նավատորմի դերը ԽՍՀՄ-ի պաշտպանության գործում։ Ինտերվենցիա (интервенция) և քաղաքացիական պատերազմ։<br>ԽՍՀՄ-ի ներկա միջազգային դրությունը։ | | | | քաղաքական կազմությունը և աշխատավորների վիճակը մյուս յերկրներից։<br>2) Ինչո՞ւ յենք մենք գտնվում կապիտալիստական շրջապատում։<br>3) Ի՞նչ նպատակներ ունի ԽՍՀՄ ուրիշ յերկրների վերաբերմամբ։ |
| III. ԽՍՀՄ-ի հարևանները. Լիտվա, Լատվիա, Լեհաստան, Ռումինիա։<br>Հարցեր.<br>1) Արևմուտքից վո՞ր պետություններն են սահմանակցում ԽՍՀՄ-ին։<br>2) Ի՞նչ գիտեք դուք այդ պետությունների մասին։ | Աշխարհագրական դիրքը բնակչության գլխավոր զբաղմունքը։ Արդյունաբերության և գյուղատնտեսության վիճակը։<br>Դրանցից յուրաքանչյուրի տնտեսական փոխհարաբերությունը ԽՍՀՄ-ի հետ։ | Այս յերկրների քաղաքական կազմությունը։<br>Գյուղացիական շարժումն այս յերկրներում։ Կոմկուսի ԿՑԵՄ.-թյան դերը։<br>Այս յերկրների կախումն ավելի ուժեղ կապիտալիստական պետություններից։(Ռումինիան, Բեսսարաբիան, Լեհաստանը Ֆրանսիայի կրունկի տակ)։ | | Ամփոփել շաբաթվա ընթացքում լրագրներում լույս տեսած այս յերկրների քաղաքական կյանքին վերաբերյալ հոդվածների նյութը։ Կարդացածի կոնսպեկտը։ | Ռուսական և մետրական չափերի համեմատական տախտակից օգտվելու վարժություններ։ Վարժվել ինքնուրույն կերպով տախտակից կազմել և փոխադրություն կատարել մի չափից մյուսը։ | «Մաճկալ», «Խորհրդային Հայաստան», «Մարտակոչ», «Աշխատանք» II տ.<br>Ամփոփում և յեզրակացություն.<br>1) Ե՞րբ բաժանվեցին Ռուսաստանից Լատվիան, Եստոնիան, Լիտվան և Լեհաստանը։<br>2) Վո՞ր մեծ պետությունների ազդեցության տակ են գտնվում նրանք։<br>3) Ի՞նչպես է կռվում այս յերկրների բանվորական դասը կապիտալի դեմ։<br>4) Ի՞նչ դեր է խաղում այնտեղ կոմկուսակցությունը և |

| Թեմաներ | Տնտեսական-աշխարհագրություն | Քաղաքագիտություն | Բնագիտություն | Հայոց լեզու | Մաթեմատիկա | Աղբյուրներ |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| | | | | | | կոմսոմոլը։<br>5) Այդ պետությունների ի՞նչ հարաբերության մեջ են ԽՍՀՄ-ի հետ։<br>6) Ի՞նչ են գրում լրագրներում այդ պետությունների մասին։ |
| IV.—Ամերիկական խումբ. Ամերիկայի գաղութները և նրանից կախում ունեցող պետությունները։<br>Հարցեր։<br>1) Ի՞նչն է մեզ անջատում Ամերիկայից.<br>2) Ի՞նչպես են ապրում բանվորներն Ամերիկայում։ | Գտնել քարտեզի վրա Հյուս. նահանգների գաղութները և նրանցից կախում ունեցող պատությունները։ Ամերիկայի և նրա գաղութների տընտեսական վիճակը. հարաբերությունները կախումը ունեցող յերկրների հետ։<br>Ամերիկայի արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը։ Արտաքին առևտուրը։ Համաշխարհային պատերազմի ազդեցությունը Միացյալ նահանգների տնտեսության վրա։<br>Միաց. նահ. վորպես համաշխարհային վարկի կենտրոն։ Ամերիկայի դերը համաշխարհային տնտեսության մեջ և արևելքը։ | Ամերիկայի դերը համաշխարհային և քաղաքացիական պատերազմներում։<br>Ամերիկան և ապագա պատերազմը։ | Գաղափար կլիմայական գոտիների մասին։ Տարվա յեղանակները։ Կլիմայի ազդեցությունը Ամերիկայի բնակչության զբաղմունքի վրա։ | Թեմայի վերաբերյալ լրագրական հոդվածներից ինքնուրույն ընտրություն։ (Կարել և կպցնել տետրակում այդ ընտրած կտորները)։<br>Հարցական, բացականչական նըշաններ, շեշտ, բութ։ | Տվյալ թվերով գտնել $^0/_0$-ային հարաբերությունները և արտահայտել այն գրաֆիկական և շրջանաձև դիագրամներով։ | Հետևել ձեռքի տակ յեղած լրագրերին։<br>—<br>Ամփոփում և յեզրակացություն։<br>1) Ի՞նչ վերաբերմունք ունի Ամերիկան դեպի արևելյան ժողովուրդները։<br>2) Ի՞նչ վիճակումն է Ամերիկայի արդյունաբերությունը համաշխարհային պատերազմից հետո։<br>3) Ի՞նչից է առաջացել այնտեղ հավելյալ արտադրանք։<br>4) Ինչո՞ւ է Ամերիկան համաշխարհային վարկի կենտրոն։ |
| V.-Բրիտանական խումբ։ | Գտնել քարտեզի վրա | Անգլիայի քաղաքական | | Ծրագրված նյու- | Բազմապատկում | Ոգտվել ձեռքի տակ |

| Թեմաներ | Տնտեսական աշխարհագրություն | Քաղաքագիտություն | Բնագիտություն | Հայոց լեզու | Մաթեմատիկա | Աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| Անգլիան, նրա գաղութները և նրանից կախում ունեցող պետությունները։<br>Հարցեր.<br>1) Ի՞նչ գիտեք Անգլիայի մասին։<br>2) Ի՞նչ են գրում նրա մասին լրագրներում։<br>3) Ի՞նչ գիտեք Անգլիայի և ԽՍՀՄ-ի փոխհարաբերությունների մասին։ | Անգլիան նրա գաղութներն և նրանից կախում ունեցող պետությունները։ Դրանց աշխարհագրական և տնտեսական նկարագիրը։ Անգլիայի արդյունաբերական կենտրոններն ու գյուղատնտեսությունը։<br>Գաղութների նշանակությունը բրիտանական խմբակցության համար։ Անգլիայի դերը համաշխարհային առևտրի մեջ։ Նրա առևտուրը։ Համաշխարհային պատերազմի ազդեցությունը նրա տնտեսության վրա։<br>— | կազմը։<br>Նրա գաղութային քաղաքականությունը։Բանվորական շարժումն Անգլիայում։ Արհմիությունները։ Բանվորական կուսակցությունը. կոմկուսը և Կոմյերիտմիությունը։ | | Թի շուրջը գրքերի ընտրությունը։Կազմել զեկուցումներ։<br>Միջակետ, չակերտներ նախադասության մեջ ուրիշի խոսքերից առաջ։ | և բաժանում ամեն տեսակ մեծության թվերով։ | յեղած գրքերից։<br>═<br>Ամփոփում և յեզրակացություններ։<br>1) Գտեք քարտեզի վրա տիրապետող պետությունը և նրա գաղութները։<br>2) Ի՞նչ փոխհարաբերության մեջ են այդ պետությունները։<br>3) Ի՞նչ հարաբերության մեջ են նրանք ԽՍՀՄ-ի հետ։<br>4) Ի՞նչ է նրա գաղութային քաղաքականությունը։<br>5) Նրա դերը համաշխարհային շուկայում։<br>6) Ի՞նչպես են կռվում բանվորները կապիտալի դեմ այս յերկրներում։<br>7) Կոմկուսի և կոմսոմոլի դերն այս յերկրների բանվորական շարժման մեջ։ |
| VI. Արևելյան Ասիայի մեծ պետությունների խումբ։<br>Ճապոնիա, Չինաստան։<br>— | Գտնել այդ խմբակցությունը գլխավորող Ճապոնիան, իր գաղութները և նրանից կախում ունեցող պետությունները | Ճապոնիայի քաղաքական կազմությունը։Մասնակցությունը քաղաքացիական պատերազմում։ Ամերիկայի և Անգ- | | Կազմել զեկուցում ներկա մոմենտի մասին ծրագրի շոշափած հարցերի շուրջը։ | Ամեն տեսակի մեծություն թվերով բազմապատկում և բաժանում։ Մեկ թվի %-ի | Կարդալ կենտրոնական լրագրներում հոդվածներ ներկա մոմենտի շուրջը։ |

| Թեմաներ | Տնտեսական-աշխարհագրություն | Քաղգրագիտություն | Բնագիտություն | Հայոց լեզու | Մաթեմատիկա | Աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| Հարցեր։<br>Նույնը, ինչ 4-ում. | (Չինաստան)։ Նրանց տնտեսական նկարագիրը. գլխավոր հում նյութերը։ Ճապոնիայից կախում ունեցող պետությունների գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը. Ճապոնիայի արտաքին առևտուրը։ Չօգտագործված յերկրները կապիտալի ավելցուկով շահագործելու կարիքը։ Շահագործման գլխավոր յերկիրը Չինաստանն է։ | լիայի դեմ պայքար՝ Չինաստանում գերիշխանություն ձեռք բերելու հարցում։ Ճապոնիայի և ԽՍՀՄ-ի փոխհարաբերությունը։ | | | գտնելը մյուսից։ | «Աշխատանք» II տ.<br>———<br>Ամփոփում և յեզրակացություններ. Տես 4-րդ թեմայի հարցերը. |
| VII.— Ֆրանսիա, Բելգիա, Իտալիա։<br>———<br>Հարցեր։<br>Տես 4-րդ թեմայի հարցերը։ | Գտնել քարտեզի վրա խմբակցությունը գլխավորող Ֆրանսիան և նրանից կախում ունեցող պետությունները (Բելգիան, Չեխո-Սլովակիան, Հարավ-Սլավիան, Ռումինիան)։<br>Ֆրանսիայի գաղութները. գլխավոր հում նյութերը։ Ֆրանսիայի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը։ Նավահանգիստները։ Գլխավոր յերկաթուղագծերը և ծովային ճանապարհները։ Ֆրանսիայի դերը համաշխարհային տնտեսության մեջ։<br>Իտալիայի և նրա գաղութների նկարագիրը։ | Ֆրանսիայի քաղաքական կազմությունը։ Ֆրանսիայի դերն իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմում։<br>ԽՍՀՄ-ի և Ֆրանսիայի փոխհարաբերությունը։ Կոմկուսի և կոմյերիտմիության դերն այս պետություններում։ Ֆրանսիայի բանվորական շարժումը։<br>Արհմիությունները։ Համաձայնողական կուսակցությունների ազդեցությունն այս յերկրների բանվորական մասսաների վրա։<br>Փարիզի կոմմունան։<br>——— | | Ստեղծագործական շարադրություն ազատ թեմայի շուրջը։ Լրագրական հոդվածների բանավոր և գրավոր ամփոփում։ Վարժեցնել փոքրիկ թղթակցություններ գրել լրագրներում։ Ուղղագրական կանոնների կրկնություն։ | Տասնորդական կոտորակների չորս գործողությունները։ | «Մեթոդական ժողովածու».<br>«Աշխատանք» I և II տ.<br>———<br>Ամփոփում և յեզրակացություններ. Տես 4-րդ թեման. |

| Թեմաներ | Տնտեսական-աշխարհագրություն | Քաղաքագիտություն | Բնագիտություն | Հայոց լեզու | Մաթեմատիկա | Աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| | Նրա նշանակությունը համաշխ. շուկայում։ Նրա դերը Միջերկրականում։ Հաղորդակցության միջոցները։ | | | | | |
| VIII.—Գերմանիա։<br>—<br>Հարցեր<br>Տես 4-րդ թեման։ | Նրա աշխարհագրական տնտեսական նկարագիրը։ Արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը։ Գերմանիան պատերազմից առաջ և հետո։ Ռուրն և նրա նշանակությունը Գերմանիայի համար։ Ռուրի տնտեսական արժեքը Ֆրանսիայի համար։<br>Գերմանիայի յերկաթուղագծերն ու ջրային ճանապարհները։ Արդյունաբերության գլխավոր կենտրոնները։ | Գերմանիայի քաղաքական կազմությունը մինչև իմպերիալիստական պատերազմը և նրանից հետո։ | | Ստեղծագործական շարադրություն ազատ թեմայի շուրջը։<br>Անցածի կրկնություն։ | Տասնորդական կոտորակների բոլոր գործողությունները։ Կիակատար ծանոթություն ռուսական և մետրական յերկարության և ծանրության չափերին։ | Նույնը (տես 4-րդ թեմա)<br>—<br>Ամփոփում և յեզրակացություններ։<br>Տես 4-րդ թեմա։ |
| IX.—Կապիտալիստական աշխարհի քաղաքական-տնտես-աշխարհագրական ընդհանուր տեսություն։<br>Հարցեր։<br>1) Պատմեցեք ԽՍՀՄ-ի քաղաքական կազմի մասին և համեմատեցեք ձեր գիտցած կապիտալիստական յերկրի հետ։<br>2) Ի՞նչ միջոցների յե դիմում Խորհրդային իշխանութ. պլանամեր տըն- | Կապիտալիստական աշխարհի քաղաքական-տընտեսական նկարագիրը։ ԽՍՀՄ-ի և Կոմինտերնի դերը համաշխարհային հեղափոխություն առաջ բերելու խնդրում։ Բոլոր յերկների տնտեսական փոխհարաբերությունը։ Իմպերիալիստական յերկրների տնտեսական կյանքը։ Փոխադարձ պայքար չոգտագործված ռայոնները ձեռք ձգելու հա- | Քաղաքական անտագոնիզմը (հակասությունները) կապիտալիստական յերկրներում և ընդհակառակը ԽՍՀՄ-ի միաբանությունը։ Խորհուրդները։—<br>Աշխարհի միությունը խորտակվում ե իմպերիալիզմով։ Կապիտալիստական յերկրների եկսպլուատացիան (շահագործումը) և աշխատավորների իրավազրկու- | | Ծանոթանալ կենտրոնական լրագըրներին։<br>Թղթակցել լրագըրներին։ | Վորոշել այս կամ այն յերկրի յեկամուտի տոկոսն ըստ գանազան արդյունաբերական ճյուղերի և գյուղատընտեսության տվյալների—համաշխարհային մասշտաբով։ | (Տես 7-րդ թեմա)։<br>—<br>Ամփոփում և յեզրակացություններ։<br>1) Նկարագրեցեք բոլոր այն կապիտալիստական յերկըրների քաղաքական կազմությունը, վորոնց մասին մենք կարդացել ենք։<br>2) Ինչո՞ւ յեն հարկավոր կապիտալիս- |

| Թեմաներ | Տնտեսական-աշխարհագրություն | Քաղաքագիտություն | Բնագիտություն | Հայոց լեզու | Մաթեմատիկա | Աղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|
| տեսության կանոնավորման համար։<br>3) Ի՞նչպես են տանում իրենց տնտեսությունները կապիտալիստական յերկրները։<br>4) Ի՞նչ ճանապարհներով եր գնում բանվոր դասակարգը կապիտալիզմից ազատվելու համար։ | մար։ ԽՍՀՄ-ի տնտեսական քաղաքականությունը աշխատավորների ընդհանուր միասնական պլանաչափ տնտեսություն ստեղծելու, սոցիալիստական տնտեսության հասնելու և այս վերջինից կոմունիզմին անցնելու գործում։ ԽՍՀՄ-ի քաղաքականությունը տնտեսական փոխհարաբերություն ստեղծելու համար կապիտալիստական յերկրների հետ (պայմանագրերով)։ | թյունը։<br>Աշխատանքի պաշտպանությունը և աշխատավորների իրավունքները ԽՍՀՄ-ում։<br>Հոկտեմբերյան հեղափոխ. արձագանքները բոլոր յեվրոպական յերկրներում. (Գերմանիա, Վենգրիա, Իտալիա)։ Դասակարգային կռիվը կապիտալիստական յերկրներում։<br>Բանվոր դասակարգի նպատակը—ստեղծել համաշխարհային Խորհրդային Հանրապետություն։<br>Կոմինտերնը— համաշխարհային հեղափոխության շտաբն է։<br>Պրոֆինտերն այն կազմակերպությունն է, վորը միացնում է ամբողջ աշխարհի աշխատավորներին։<br>Լենինը համաշխարհային պրոլետարիատի առաջնորդն է։ | | | | տական յերկրներին պատերազմները։<br>3) Կարո՞ղ են այդ պետությունները միասնական տնտեսության հասնել։<br>4) Ի՞նչ դեր խաղաց կոմկուսը բանվորների ազատության և աշխատավորների իշխանություն հաստատելու գործում։<br>5) Կոմինտերնի նպատակը.<br>6) Ի՞նչ է պատվիրել Լենինը և ինչու յե նա համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ։ |

# Ա Ն Կ Ե Տ Ա

## ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ 1-ԻՆ ԹԵՄԱՅԻ ՆՅՈՒԹԻՆ ԾԱՆՈԹԱՑՆԵԼՈՒ, ՄՈՏԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

1. Անուն, հայրանուն, ազգանուն ..................
2. Ծննդյան տարեթիվը (քա՞նի տարեկան է) ..................
3. Ո՞րտեղ է ծնվել (գյուղ, քաղաք, գավառ, նահանգ) ..................
4. Ընտանեկան դրությունը ..................
5. Ներկա բնակավայրը. ինչ քաղաքներում, գավառներում է յեղել ..................
..................
6. Ինչո՞վ է պարապում ..................
7. Քա՞նի ժամ է աշխատում ..................
8. Ո՞ր արհմիության է պատկանում յեվ ո՞ր թվից
9. Ինչո՞վ եյին պարապում ծնողները
10. Ինչո՞ւ յե մնացել անգրագետ կամ կիսագրագետ
11. Վարե՞լ է ընտրովի պաշտոններ (կին բաժ-պատգամավորուհի, հանձնաժողովի փոխօգնության կոմիտեներում, կոոպերացիայի մեջ յեվ այլն ..................
12. Ի՞նչ ընտրությունների յե մասնակցել (ֆաբկոմ, գործկոմ, տեղկոմ, կոոպերատիվ, խորհուրդներ)
13. Վերջին ժամանակներում ի՞նչ ցույցերի յե մասնակցել
14. Ի՞նչ մասնակցություն է ցույց տվել ՀԽՍՀ-ի խորհրդայնացմանը
..................
15. Ի՞նչ կուսակցության է պատկանում
16. Հասցեն

.................. տարեթիվ ամիս ամսաթիվ

ՀՀ Ազգային գրադարան
NL0228607

48 627